ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» սեպտեմբերի 2016թ. **N-----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային Սիսակյան փողոցի հ.3 շենքից բնակիչներին վերաբնակեցնելու նպատակով (համաձայն հավելվածի) անհատույց օտարել (նվիրել) բնակարաններ՝ Շինարարների փողոցի հ.հ.6/1 և 15 հասցեներում գտնվող նոր կառուցված շենքերից։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող նախագծով նախատեսվում է Շինարարների փողոցի հ.հ.6/1 և 15 հասցեներում գտնվող նոր կառուցված բնակելի շենքերում վերաբնակեցնել Երևան քաղաքում առկա 4-րդ կարգի վթարային Սիսակյան փողոցի հ.3 հանրակացարանային շենքի բնակիչներին՝ համաձայն հավելվածի:

ՀՀ կառավարության 2009 թվականի փետրվարի 5-ի «Երևան քաղաքում քանդման ենթակա վթարային հանրակացարանային բնակելի շենքերի բնակիչներին բնակարաններ հատկացնելու կարգը հաստատելու մասին» 172-Ն որոշմամբ կարգավորվում են քանդման ենթակա վթարային հանրակացարանային շենքերի բնակիչների վերաբնակեցման հետ կապված իրավահարաբերությունները:

Որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ կից հավելվածում նշված քաղաքացիները՝ վտանգելով իրենց կյանքն ու առողջությանը, դեռևս բնակվում 4-րդ կարգի վթարային Սիսակյան փողոցի հ.3 շենքում: Այդ շենքը գտնվում է փլուզման սպառնալիքի տակ և անկանխատեսելի հետևանքներից խուսափելու նպատակով, քաղաքացիների հետ կատարված բանակցությունների արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել հավելվածում նշված ընտանիքներին վերաբնակեցնել և տրամադրել նոր բնակարաններ:

Ստորև ներկայացվում է յուրաքանչյուր ընտանիքի անհատական տվյալների նկարագիրը:

Քաղաքացիներ Մարիամ Հակոբյանը և Էմմուշ Հարությունյանը /ընդհանուր 2 անձ/ 2003 թվականից հաշվառված և փաստացի բնակվում է 4-րդ կարգի վթարային Սիսակյան փողոցի հ.3 շենքի հ.51 բնակարանում (հիմք՝ 23.12.2015թ, 24.02.2015թ. տրված բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին հ.հ.508271, 458280 և «Ծաղկունք» համատիրության կողմից 23.12.2015թ. հ.339, 25.02.2015թ. հ.32 տրված տեղեկանքներ):

Նշված քաղաքացիները համաձայնություն են տվել վերաբնակեցվել նորակառույց Շինարարների փողոցի հ.15 շենքում, սակայն տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները:

Քաղաքացիներ՝ Ռոման Ազատյանը, Ռուզաննա Հախնազարյանը /ընդհանուր 2 անձ/ 2014 թվականից հաշվառված և փաստացի բնակվում են 4-րդ կարգի վթարային Սիսակյան փողոցի հ.3 շենքի հ.102/1 բնակարանում (հիմք՝ 27.04.2015թ բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին հ.464853 տեղեկանք):

Նշված ընտանիքը համաձայնություն է տվել վերաբնակեցվել նորակառույց Շինարարների փողոցի հ.6/1 շենքում, սակայն տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները:

Քաղաքացի Տաթևիկ Մանուկյանը /ընդհանուր 1 անձ/ 2014 թվականից հաշվառված և փաստացի բնակվում է 4-րդ կարգի վթարային Սիսակյան փողոցի հ.3 շենքի հ.54/1 հասցեում (հիմք՝ 02.06.2015թ տրված բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին հ.478249 և «Ծաղկունք» համատիրության կողմից 02.06.2015թ. տրված տեղեկանքներ):

Նշված քաղաքացին համաձայնություն է տվել վերաբնակեցվել նորակառույց Շինարարների փողոցի հ.6/1 շենքում, սակայն տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները:

Քաղաքացի Լիլիթ Աղաբեկյանը /ընդհանուր 1 անձ/ 2015 թվականից հաշվառված և փաստացի բնակվում է 4-րդ կարգի վթարային Սիսակյան փողոցի հ.3 շենքի հ.9բ բնակարանում (հիմք՝ 17.09.2015թ տրված բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին հ.496809 և «Ծաղկունք» համատիրության կողմից 17.09.2015թ. տրված տեղեկանքներ):

Նշված քաղաքացին համաձայնություն է տվել վերաբնակեցվել նորակառույց Շինարարների փողոցի հ.6/1 շենքում, սակայն տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2015

թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները:

Քաղաքացիներ Խորեն Բայանդուրյանը, Իրինա Հովհաննիսյանը, Յուրա Բայանդուրյանը /ընդհանուր 3 անձ/ 2015 թվականից հաշվառված և փաստացի բնակվում է 4-րդ կարգի վթարային Սիսակյան փողոցի հ.3 շենքի հ.10ա հասցեում (հիմք՝ 18.06.2015թ տրված բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին հ.482662 և «Ծաղկունք» համատիրության կողմից 19.06.2015թ. տրված տեղեկանք)։

Նշված ընտանիքը համաձայնություն է տվել վերաբնակեցվել նորակառույց Շինարարների փողոցի հ.6/1 շենքում, սակայն տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները:

Քաղաքացի Վալենտինա Մանուկյանը /ընդհանուր 1 անձ/ 2003 թվականից հաշվառված և փաստացի բնակվում է 4-րդ կարգի վթարային Սիսակյան փողոցի հ.3 շենքի հ.54 հասցեում (հիմք՝ 20.10.2015թ տրված բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին հ.499882 և «Ծաղկունք» համատիրության կողմից 27.10.2015թ. տրված տեղեկանքներ)։

Նշված քաղաքացին համաձայնություն է տվել վերաբնակեցվել նորակառույց Շինարարների փողոցի հ.15 շենքում, սակայն տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քննարկվող դեպքերով բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշման հավելվածի /ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները, ուստի անհրաժեշտություն է առաջացել գործող կարգի համաձայն 4-րդ կարգի վթարային Սիսակյան փողոցի հ.3 հանրակացարանային շենքի բնակիչներին վերաբնակեցնելու համար ընդունելու Երևանի ավագանու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարաններն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարաններն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
,,_____,,_____ 2016թ. N_____-Ա որոշում

Ց Ա Ն Կ

ՎԵՐԱԲՆԱԿԵՑՎՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԵՎ ՓՈԽԱՆԱԿՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ

հ/հ	Անուն Ազգանուն	Վթարային շենքի բնակարանի հասցեն	Կառուցվածքը /սենյակների թիվը/	Տրամադրվող բնակարանի հասցեն	Կառուցվածքը /սենյակների թիվը/	Ծանոթություն
1	Մարիամ Հակոբյան Էմմուշ Հարությունյան	Սիսակյան փողոցի հ.3 շենքի հ.51	1	Շինարարների փողոցի հ.15 շենքի հ.42	1	
2	Ռոման Ազատյան Ռուզաննա Հախնազարյան	Սիսակյան փողոցի հ.3 շենքի հ.102/1	1	Շինարարների փողոցի հ.6/1 շենքի հ.89	1	
3	Տաթևիկ Մանուկյան	Սիսակյան փողոցի հ.3 շենքի հ.54/1	1	Շինարարների փողոցի հ.6/1 շենքի հ.65	1	
4	Լիլիթ Աղաբեկյան	Սիսակյան փողոցի հ.3 շենքի հ.9բ	1	Շինարարների փողոցի հ.6/1 շենքի հ.83	1	
5	Խորեն Բայանդուրյան Իրինա Հովհաննիսյան Յուրա Բայանդուրյան	Սիսակյան փողոցի հ.3 շենքի հ.10ա	1	Շինարարների փողոցի հ.6/1 շենքի հ.95	1	
6	Վալենտինա Մանուկյան	Սիսակյան փողոցի հ.3 շենքի հ.54	1	Շինարարների փողոցի հ.15 շենքի հ.120	1	